



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ**

0010 ք.Երևան, Նալբանդյան 28, հեռ. 583 734

«09» ապրիլի 2018թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Դատավորի լիազորությունները դադարելու վերաբերյալ


Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսունհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե լրացել է նրա 65 տարին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով դատավորի պաշտոնավարումը դադարում է նրա 65 տարին լրանալու օրվանից»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով դատավորի լիազորությունների դադարման դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահը դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում»:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Անատոլի Մաթևոսյանի 65 տարին՝ լիազորությունների ժամկետը, լրանում է 2018 թվականի ապրիլի 16-ին:


Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ